

Ընդհանուր իրազեկություն

Հոդվածը պետք է ներկայացնել էլեկտրոնային տարբերակով՝ ուղարկելով նշված էլեկտրոնային հասցեին, նշելով բոլոր հեղինակների տվյալները (հայերեն, ռուսերեն և անգլերեն) (Հավելված 2):

Հոդվածները տպագրվում են հայերեն, ռուսերեն և անգլերեն:

Հոդվածի կառուցվածքը

Հոդվածը հարկավոր է շարադրել հետևյալ հերթականությամբ.

- Ոլորտը
- ՀՏԴ (համընդհանուր տասնորդական դասակարգման) կոդը (YDK)
<http://www.udcsummary.info/php/index.php?lang=hy&pr=Y>
- Հոդվածի վերնագիրը (թավ (Bold)), առանց գլխատառերի:
- Հաջորդ տողում կենտրոնում ազգանուն, անուն (թավ և շեղ (Bold, Italic)), գիտական աստիճան, կազմակերպություն
- Հաջորդ տողում գրել՝ «Հանգուցային բառեր.» արտահայտությունը և 6-8 հանգուցային բառեր կամ բառակապակցություններ: Հանգուցային բառերի շարքում չեն նշվում վերնագրում արդեն իսկ բերված բառերը:
- Հոդվածները ձևակերպվում են հստակ ենթաբաժիններով՝ ըստ ենթավերնագրերի:
Նախաբան, որտեղ պետք է հիմնավորվի տվյալ հետազոտության նպատակը, խնդիրները, նորույթը, արդիականությունը, տեսական և գործնական նշանակությունը:
Հոդվածի բովանդակությունը,
Հետազոտության մեթոդները, փորձարարական վերլուծությունը և արդյունքները (ԲՊրակի համար)
Եզրակացություն
Գրականություն՝ (թավ (Bold)), առանց գլխատառերի, այբբենական կարգով համարակալված.

ա) գրքերի համար նշվում են հեղինակի (հեղինակների) ազգանունը և անվան, հայրանվան սկզբնատառերը, գրքի լրիվ անվանումը, հրատարակության վայրը, տարեթիվը:

Նմուշ՝

Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2007, 296 էջ:

Шейнина Е.Я. Энциклопедия символов. М.: АСТ: Торсинг, 2001.- 592 с.

բ) Հանդեսներում և ժողովածուներում զետեղված հոդվածների համար՝ հեղինակի (հեղինակների) ազգանունը և անվան, հայրանվան սկզբնատառերը, հոդվածի լրիվ անվանումը, ամսագրի անվանումը՝ համաձայն ընդունված հապավումների, հատորը, ամսագրի կամ թողարկման համարը, հրատարակման տարեթիվը, հոդվածի առաջին և վերջին էջը՝ միության գծով:

Նմուշ՝

Զաքարյան Ա., Կոմիտասի ստեղծագործական ժառանգության իմաստավորման հարցերը «Պատմաբանասիրական հանդես»-ի էջերում // Պատմաբանասիրական հանդես, Երևան, 2019, հմ. 3, էջ 23-42:

Соловьева Н.А., Хижняк С.Д., Пахомов П.М. Исследование качественного состава и антиоксидантной активности фенольных соединений тысячелистника обыкновенного в условиях промышленного загрязнения города Твери // Вестник ТвГУ. Серия «Химия». 2015, № 4, с. 102-111.

Brun S., Chalcedonian Orthodoxy in the Kingdom of Armenia // Reveu of Armenian Studies (Բանբեր հայագիտության), Yerevan, 2018, p. 5-31.

Саксон Грамматик. Деяния датчан [Электронный ресурс] – Режим доступа: URL: http://deyaniya-datchan_rulit_net (дата обращения 01.01.2022)

Գրականության ցանկին հաջորդում են ամփոփումները՝ երկու լեզվով, որոնք իրենց բովանդակությամբ պետք է նույնական լինեն և բաղկացած լինեն 300-350 բառից¹, իսկ այդ լեզուների հանգուցային բառերը պետք է նույնական լինեն ելակետային լեզվի հետ:

Արտասահմանյան օտարալեզու հոդվածների հեղինակների համար սահմանվում է հոդվածի բնագրից տարբերվող լեզվով ամփոփում (ոչ հայերեն):

Գրվում են հոդվածի վերնագիրը, հաջորդ տողում՝ ազգանունը, անունը (ձևավորումը՝ ըստ բնագրային հոդվածի) և առանձին տողերով՝ «Ամփոփում» բառը՝ համապատասխան լեզվով, առանց գլխատառերի, հանգուցային բառերը, ամփոփման տեքստը:

Ամփոփումները չպետք է պարունակեն հապավումներ, հղումներ և մեջբերումներ: Ամփոփումները պետք է հոդվածի մասին պատկերացում տան հոդվածից առանձին և արտացոլեն հոդվածի բովանդակությունը:

Հոդվածի առավելագույն ծավալը 15 էջ է, նվազագույնը՝

¹ Այս կետը գործում է 2022թ. երկրորդ համարից

ա) 4 էջ՝ ֆիզիկամաթեմատիկական, բնագիտական, տեխնիկական գիտությունների համար,

բ) 6 էջ՝ հումանիտար և հասարակագիտական գիտությունների համար,

գ) 8 էջ՝ ուսումնամեթոդական աշխատանքների համար:

Հոդվածի ծավալին չեն ներառվում երկու լեզվով ամփոփումները և գրականության, աղբյուրների, համառոտագրությունների ցանկերը:

Հոդվածի ձևավորումը

Microsoft Office Word 2007 ծրագրով A4 ձևաչափի թղթի վրա

լուսանցքները վերևից (Top)՝ 20 մմ, ներքևից (Bottom)՝ 25 մմ, ձախից (Left)՝ 30 մմ, աջից (Right)՝ 10 մմ

Տառատեսակը հայերենի դեպքում՝ Unicode (Sylfaen)

տառաչափը՝ 12

Միջտողային հեռավորությունը (Line spacing)՝ 1.5, պարբերությունը (First line)՝ 0,75 սմ

Չօգտագործել մեկից ավել տառաբացակ (пробел)

Աղյուսակները, նկարները, գծագրական պատկերները պետք է ունենան համարակալում, վերնագրային բացատրություն՝ 10 տառաչափով, թավ, շեղ (Bold, Italic): Դրանց բարձրությունը չպետք է գերազանցի 170 մմ, լայնությունը՝ 110 մմ:

Աղյուսակների տեքստը պետք է լինի 10 տառաչափով:

Բանաձևերը և մաթեմատիկական արտահայտությունները ներկայացվում են Microsoft Equation, շեղ (Italic), իսկ հիմնականները՝ առանձին տողով, մեջտեղում, կարող են համարակալվել նույն տողի աջ անկյունում՝ կոր [()] փակագծերի մեջ:

Խորհրդանշաններ պարունակող հոդվածների դեպքում, եթե դրանք Sylfaen տարատեսակի մեջ չկան պարտադիր է խորհրդանշանների էլեկտրոնային ֆոնտը:

Տեքստում հղումները տրվում են ուղղանկյուն փակագծերում []: